**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 07**

*Լերմոնտովո համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 03-ի նիստի.*

գ. Լերմոնտովո Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

**Մասնակցում էին՝**

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Իվան Բոլոտին, Քրիստինե Խառատյանը, Վասիլի Կորոլյովը; համայնքապետարանի աշխատակիցները:

**ՆԻՍՏԸ** - Էդիկ Չախալյանը ժամը 11:00-ին նիստը հայտարարեց բացված:

**Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:**

**Կողմ՝ 4, դեմ՝ 0 ընդունվեց որոշում:**

**Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.**

**Հաստատված օրակարգը /N27/՝**

1.ԼՄ Լերմոնտովո համայնքի ամենամյա գույքագրման արդյունքների մասին

զեկ. Մ.Բոլոտինա

2.ԼՄ Լերմոնտովո համայնքում 2025 թ-ի համար տեղական տուրքերի տեսակները, դրույքաչափերը սահմանելու մասին

զեկ. Ռ.Խեչումյան

3.ԼՄ Լերմոնտովոյի համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

զեկ. Մ.Բոլոտինա

4.ԼՄ Լերմոնտովո համայնքի "ՄԿԱՀԿԱ" ՆՈՒՀ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

զեկ. Մ.Բոլոտինա

5.Լերմոնտովո համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

զեկ. Ա.Գալուստյան

6.Լերմոնտովո համայնքի տարածքում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

զեկ. Ա.Գալուստյան

7.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալությամբ տրամադրելու մասին

զեկ. Ա.Գալուստյան

8.ՀՄ Լերմոնտովո համայնքի վարչական սահմաններում գտնվող գաբրոների հանքավայրում հանքարդյունահանման աշխատանքների մասին

զեկ. Ռ.Խեչումյան

9.Լերմոնտովո համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման տեղական կառավարման պլանը հաստատելու մասին

զեկ. Ռ.Խեչումյան

**ԸՆԹԱՑՔԸ՝**

1. **ԼՍԵՑԻՆ** - ԼՄ Լերմոնտովո համայնքի ամենամյա գույքագրման արդյունքների մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան
Նա ներկայացրեց տարվա գույքագրման արդյունքները՝ որտեղ ավելցուկ և պակասորդ չի արձանագրվել, ինչիժն ավագանու անդամները տվեցին իրենց հավանությունը:

**Քվեարկությամբ, կողմ՝** 4, **ընդունվեց որոշում: /N28/**

2. **ԼՍԵՑԻՆ** - ԼՄ Լերմոնտովո համայնքում 2025 թ-ի համար տեղական տուրքերի տեսակները, դրույքաչափերը սահմանելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքի ղեկավարի տեղակալ Ռոզա Խեչումյանը:
Նա ներկայացրեց 2025 թ-ի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը: Ավագանու անդամները քննարկեցին և ընդունվեց որոշում մի քանի տուրքերի տեսակների դրույքաչափերի բարձրացման վերաբերյալ, ինչը արտահայտվեց որոշման հավելվածում:

**Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N29-Ն/**

3. **ԼՍԵՑԻՆ** - ԼՄ Լերմոնտովոյի համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան: Նա ներկայացրեց համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը և դրույքաչափերը; ներկայացրեց նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը դրույքաչափերի ավելացման ոոուղղությամբ, ինչին ավագանու անդամները տվեցին իրենց համաձայնությունը::

**Քվեարկությամբ, կողմ՝** 4, **ընդունվեց որոշում: /N30/**

4. **<u>ԼՍԵՑԻՆ</u>** - ԼՄ Լերմոնտովո համայնքի "ՍԿԱԶԿԱ" ՆՈՒՀ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան: Նա ներկայացրեց համայնքի մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը և դրույքաչափերը; ներկայացրեց նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը դրույքաչափերի ավելացման ոոուղղությամբ, ինչին ավագանու անդամները տվեցին իրենց համաձայնությունը::

**Քվեարկությամբ, կողմ՝** 4, **ընդունվեց որոշում: /N31/**

5. **<u>ԼՍԵՑԻՆ</u>** - Լերմոնտովո համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը:
Նա ներկայացրեց, որ Լերմոնտովո համայնքի վարչական տարածքում է գտնվում քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող հողամասը և նա դիմել է համայնքապետարան նպատակային նշանակությունը փոխելու դիմումով՝ որպեսզի կարողանա հիմնի անասնապահական տնտեսություն: Ավագանու անդամները համաձայնվեցին և համայնքի ղեկավարին առաջարկեցին ապահովել համապատասխան գործընթացը:

**Քվեարկությամբ, կողմ՝** 4, **ընդունվեց որոշում: /N32/**

6. **<u>ԼՍԵՑԻՆ</u>** - .Լերմոնտովո համայնքի տարածքում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը: Նա ներկայացրեց, որ Լերմոնտովո համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականության հանդիսացող հողամասից առանձնացված հողամասի նպատակային նշանակությունը հարկավոր է փոխել, ինչին ավագանու անդամները տվեցին իրենց համաձայնությունը:

**Քվեարկությամբ, կողմ՝** 4, **ընդունվեց որոշում: /N33/**

7. **<u>ԼՍԵՑԻՆ</u>** - Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը վարձակալությամբ տրամադրելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը:
Նա ներկայացրեց հողամասը, որը վարձակալությամբ պետք է տրամադրվի 25 տարի ժամկետով: Սահմանվեց մեկնարկային գինը, մասնակցության վճարը: Համայնքի ղեկավարին առաջարկվեց ապահովել համապատասխան գործընթացը:

**Քվեարկությամբ, կողմ՝** 4, **ընդունվեց որոշում: /N34/**

**8. ԼՍԵՑԻՆ** - ԼՄ Լերմոնտովո համայնքի վարչական սահմաններում գտնվող գաբբրոների հանքավայրում հանքարդյունահանման աշխատանքների մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքի ղեկավարի տեղակալ Ռոզա Խեչումյանը:
Նա ներկայացրեց "ՅՈՒՆԱՅԹԵԴ ՔՈՆՍԹՐՈՒՔՇՆ" ՍՊԸ-ի դիմումը հանքավայրում աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ: Ավագանու անդամները քննարկեցին և տվեցին իրենց նախնական համաձայնությունը հանքարդյունահանման աշխատանքները իրականացնելու համար:

**Քվեարկությամբ, կողմ՝** 4, **ընդունվեց որոշում: /N35/**

**9. ԼՍԵՑԻՆ** - Լերմոնտովո համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման տեղական կառավարման պլանը հաստատելու նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքի ղեկավարի տեղակալ Ռոզա Խեչումյանը:
Նա ներկայացրեց Լերմոնտովո համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման տեղական կառավարման պլանը, որը ավագանու անդամները քննարկեցին, ուսումնասիրեցին և տվեցին իրենց համաձայնությունը:

**Քվեարկությամբ, կողմ՝** 4, **ընդունվեց որոշում: /N36/**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

1.ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

2.ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

3.ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

4.ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ